Տաթևիկ Սարոյան
ՄՄ հայցորդ
Orcid ID 0009-0002-2904-9222
էլ հասցե՝ saroyantatev@gmail.com
DOI: 10.54503/1829-0116-2023.2-186

1920-1930-ԱԿԱՆ ԹԹ. ԵՐԵՎԱՆՅԱՆ ՍՐՃԱՐԱՆԱՅԻՆ ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ՄԱՍԻՆ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՀՈՒՇԵՐԻ

Բանալի բառեր՝ *Եղիշե Չարենց, սուրճ, սրճարան, Երևան, մտավորականություն, բոհեմ, տուն-թանգարան։*

Ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս բացահայտել 1920-1930-ական թթ. երևանյան սրճարանների՝ արդեն իսկ մոռացության մատնված առօրյան ու նրանց հետ կապված պատմությունները, որոնց մասին կարելի է միայն դրվագներ գտնել Եղիշե Չարենցի մասին և նրան ժամանակակիցների հուշերում, թեպետ այդ ժամանակահատվածում դրանք եղել են մտավորականների՝ քաղաքում գործող յուրօրինակ հավաքատեղիներից[1]։

Գրողն իր շուրջը համախմբեց մեծաթիվ մտավորականների և գաղափարակիցների, իսկ սուրճի սեղանները դարձան միավորող դետալը։ Մտավորականների շնորհիվ Երևանում, հենց այդ ժամանակից սկսած, ձևավորվեց մեկ սեղանի շուրջ մտքեր փոխանակելու ու բանավիճելու սրճարանային մշակույթը։

Tatevik Saroyan
Post-graduate student of Mashtots Matenadaran
Orcid ID 0009-0002-2904-9222
saroyantatev@gmail.com

1920-1930 YEARS THE YEREVAN CAFÉ'S DAILY LIFE ACCORDING TO THE BIOGRAPHICAL MEMORIES OF YEGHISHE CHARENTS

Key words - Yeghishe Charents, coffee, cafe, Yerevan, intellectual, bohemian, house-museum.

The study is an attempt to reveal already forgotten periods of 1920s-1930s - the daily life of Yerevan cafes and the stories related to them, which can only be found in the fragments of the memoirs about Charents and the contemporaries surrounding him. The period is remarkable with the unique intellectual intelligentsia, who used to gather in the city cafes.

The writer gathered around him a large number of intellectuals and ideologists, and the coffee tables became the unifying symbol or detail. Thanks to intellectuals, since that time the cafe culture of exchanging thoughts and talking around one table has become a tradition in Yerevan.

[1] «Մտավորականներից շատերին հասցեագրված նամակներով՝ Հայաստան աշխատանքային գործուղության էր հրավիրել Մյասնիկյանը։ Նպատակը մայրագյուղ Երևանը հոգևոր մայրաքաղաք դարձնելն էր» (տե՛ս **Դ. Գասպարյան**, 2022 թ., էջ 336)։

Татевик Сароян
Аспирант Матенадарана имени Месроп Маштоца
Orcid ID 0009-0002-2904-9222
saroyantatev@gmail.com
+374 94 114463

ПОВСЕДНЕВНОСТЬ ЕРЕВАНСКОГО КАФЕ 1920-1930 ГОДОВ ПО БИОГРАФИЧЕСКИМ ВОСПОМИНАНИЯМ ЕГИШЕ ЧАРЕНЦА

Ключевые слова: Егише Чаренц, кофе, кафе, Ереван, интеллигенция, богема, дом-музей.

Исследование позволило выявить уже забытую в 1920-1930 повседневность ереванских кафе и связанные с ней истории, упоминания о которых можно встретить только в эпизодах о Чаренце и воспоминаниях окружающих, хотя они были одним из уникальных сборищ интеллектуалов, действовавших в городе в тот период.

Писатель собрал вокруг себя большое количество интеллектуалов и идеологов, а объединяющей деталью стали кофейные застолия. Благодаря интеллигенции в Ереване с того времени сформировалась кафейная культура: обмен мыслями и разговор за одним столом.

Նախաբան

Սուրճի լայն տարածումն աշխարհում սկիզբ է առել դեռևս XVII դարում։ Քաղաքներում գործող պանդոկների և գինետների կողքին ի հայտ եկան նոր հաստատություններ՝ սրճարաններ, որոնք մրցակից դարձան գործող ժամանցի ու սննդի վայրերին։ XX դարասկզբի մշակութային թոհուբոհի քաղաքներ Փարիզում, Վիեննայում, Վենետիկում, Բեռլինում սրճարաններն առավել գործուն էին, և աշխարհի գրեթե բոլոր հանրաճանաչ մտավորականները նոր գաղափարների շուրջ վեճեր էին ունենում։ Սրճարանների բոհեմական կյանքը պատկանում էր մտավորականներին։ Ժամանակակիցները գիտեին, որ Պիկասոյին, Դալիին, Մոդիլյանիին, ապա նաև՝ Քոչարին և ուրիշներին կարելի էր հանդիպել Մոնմարտրի ու Մոնպառնասի այս կամ այն սրճարանում, որտեղ վերջիններս ունեին իրենց անունով սեղաններ, և որոնց շուրջ հավաքվում էին ժամանակի երևելիները։

XX դարասկզբին եվրոպական շունչ ստացան երևանյան սրճարանները, որտեղ մեկ բաժակ սուրճի ուղեկցությամբ տեղի էին ունենում երկար զրույցներ ու քննարկումներ։ Այդ մշակույթը հայրենիք ներմուծեցին մասնավորապես Ֆրանսիայից Հայաստան վերադարձած գիտնականներն ու արվեստագետները, կամ այն երիտասարդ մտավորականները, որոնք կյանքի բերումով եղել էին Եվրոպայում և յուրացրել այն[1]։

Այդպես էր նաև 1920-ականների Երևանում։ Հայ անվանի գրող Եղիշե Չարենցին «փնտրողները» գիտեին՝ եթե Հայպետհրատում չէ, ապա կա՛մ

[1] Հատկանշական է, որ գործող երևանյան սրճարաններն առավելապես ֆրանսիական շունչ ստացան։ Ֆրանսիական ոճը 1920-1930-ական թթ. Երևանում դարձել էր օրինաչափություն. ասվածի ապացույցն են քաղաքում գործող «Ֆրանսիա» հյուրանոցն ու ռեստորանը (տե՛ս **Դ. Գասպարյան**, Եղիշե Չարենցի կյանքը և ժամանակը, Երևան, 2022, էջ 133, նաև՝ Հուշեր Եղիշե Չարենցի մասին, Երևան, 1986, էջ 91)։

«Տուրիստ» (գործել է Սախարովի հրապարակի հարևանությամբ), կա՛մ «Նալբանդ» (գտնվել է Աբովյան փողոցի վրա), կա՛մ «Ինտուրիստ» հյուրանոցում գործող («Գրանդ հոթել Երևան» հյուրանոցի ներսում), կա՛մ «Նաիրի» (գտնվել է Արմենիա Մարիոթ հյուրանոցի տարածքում) սրճարաններում է, քանի որ սուրճ էր սիրում և սուրճի սեղանի շուրջ հավաքված «խոսքն ու զրույցը»:

Ե. Չարենցի մասին խոսելիս որպես առաջնային փաստ շեշտվում է նրա գրականստեղծագործական ուղին: Սակայն պակաս կարևոր ու հետաքրքրական չէ նաև գրողի առօրյա կյանքը: Այսպես՝ նրա կենցաղն աչքի է ընկել պարզությամբ, սակայն միևնույն ժամանակ առանձնահատուկ նրբանկատությամբ: Այդ մասին փաստում են գրողի տուն-թանգարանում պահվող անձնական իրերը:

Ինչպես արդեն նշել ենք, հիշյալ սրճարաններն իրենց ուրույն տեղն ունեին Չարենցի անձնական և գործնական կյանքում: Սուրճը նրա համար միայն «արթուն մնալու» միջոց չէր, այլ բազմաթիվ հանդիպումների ու քննարկումների առիթ էր դառնում: Ուսումնասիրությունից հնարավոր եղավ բացահայտել 1920-1930-ական թթ. Երևանում սուրճի և սրճարանային մշակույթի տարածվածության, գործող սրճարանների (որոնք արդեն իսկ, ցավոք, մոռացված են), այնտեղ այցելողների և նրանց զրույցների այն թեմաների մասին, որոնք կարելի էր լսել միայն սրճարաններում, քանի որ այդ կառույցների տարածության մեջ առկա էր ազատության շունչը. Այցելուները համարձակ արտահայտում էին իրենց կարծիքները: Խոսում էին գիտությունից, գրականությունից, արվեստից, նաև՝ վիճում ու հաշտվում: Նման տեսարանի հանդիպում ենք Չարենցի և գրականագետ, դրամատուրգ Տիգրան Հախումյանի կյանքի մի դրվագում: Հախումյանը հիշում է՝ իրենց ծանոթության մի շրջանում երկուսով «կատաղի կռվում էին»՝ չխնայելով միմյանց. «... և դեռ մեր հարաբերություններում չէր սկսել, ինչպես Չարենցն էր ասում, «Զանգվի էպոխան»[1]: Մի օր նախկին համախոհները պատահաբար հանդի-պում են Երևանի՝ Մարգար աղայի հայտնի արևելյան «Նաիրի» սրճարանում[2], «որտեղ օրերն ու գիշերներն էին անցկացնում այդ ժամանակ դեռևս ոչ բազմամարդ նրանց գրական եղբայրությունը. Հախումյանի խոսքով խմում էին սուրճ, կոնյակ և վիճում մինչև խռպոտություն և հիմարություն, մինչև աչքներին սատանաներ էին երևում» (Հուշեր Եղիշե Չարենցի մասին, 1986, էջ 154): Սրճարանի հարկի

---

[1] «Զանգվի ձորը Չարենցի սիրելի վայրերից էր: Սիրում էր գետափին նվագածուներով քեֆեր կազմակերպել, նստել ափին ու «ջուր լսել»» (**Դ. Գասպարյան**, Եղիշե Չարենցի կյանքը և ժամանակը, էջ 133, Հուշեր Եղիշե Չարենցի մասին, էջ 229):

[2] «Այսօրվա «Արմենիա Մարիոթ» հյուրանոցի տեղում 1920-ական թթ. շարված էին անշուք տնակներ, իսկ նրանցից մեկում՝ «Նաիրի սրճարանը»» (տե՛ս Հուշեր Եղիշե Չարենցի մասին, էջ 154):

ներքո այս հանդիպումը կարևորվեց երկու մտավորականների հաշտությամբ:

Չարենց-գրողի կենսագրությանն ու նրա մասին հուշերն ուսումնասիրելիս տեղեկանում ենք, որ բացի երևանյան վերոհիշյալ սրճարաններից՝ սիրել է նաև այցելել «Արևելյան կաֆե»-ն՝ Կապույտ Մզկիթի բակում, ուր բանաստեղծը հաճախել է ընկերների, հիմնականում՝ Ակսել Բակունցի, Գուրգեն Մահարու,Մկրտիչ Արմենի, Վահրամ Ալազանի և այլ մտավորականների հետ: Նա ակամայից դարձել էր այդ ժամանակահատվածի սրճարանային բոհեմի ամենագործուն ներկայացուցիչը:

«Տուրիստ» սրճարանը

Այս սրճարանը 1930-ականներին մտավորականների ամենասիրելի հավաքատեղիներից էր, որը գործել է ներկայիս Վարդանանց փողոցի շենքերից մեկի ներքնահարկում:

Մարդաբան Գոհար Ստեփանյանն իր ուսումնասիրությունում (**Գ. Ստեփանյան,** 2018, էջ 342) հիշատակում է՝ սրճարանատերը Երևան ներգաղթած ֆրանսահայ մտավորական Հակոբ Տարոնացին էր, որով Աղասի Խանջյանից թույլտվություն է ստանում «հայ մտավորականներու համար» Երևանում Փարիզի Մոնմարտրի նման սրճարան բացել, որը կլիներ նրանց շփման միջավայրը: Այստեղ հիմնականում այցելում էին Չարենցը, Գուրգեն Մահարին, Զապել Եսայանը, Հրաչյա Աճառյանը, Մանուկ Աբեղյանը, Հակոբ Մանանդյանը, Երվանդ Քոչարը և ուրիշներ. «Սրճարանում շուտով ձևավորվում է սրճարանային յուրահատուկ բաց համայնք՝ մշտայցելուներից կազմված իր անդամներով, նրանց «պատկանող» սեղաններով, որոնց շուրջ միշտ նստում էին նույն մարդիկ, այցելության որոշակի օրով, ժամով և տևողությամբ, ներքին փոխհարաբերությունների չգրված օրենքներով և այլն: Ինչպես նշում են ականատեսները, հաճախ էր պատահում, որ «համայնականներից» որևէ մեկի բացակայության դեպքում համապատասխան աթոռները մինչև սրճարանի փակումն այդպես էլ ազատ էին թողնվում» (**Գ. Ստեփանյան,** 2018, էջ 342):

Այս սրճարանում էր, որ Չարենցն իրեն պատկանող «սեղան ուներ»: Նկարչուհի Ռեգինա Ղազարյանի «Չարենցի նշխարներ» հիշողությունների գրքույկում կա մի անդրադարձ՝ «Չարենցի սեղանը» վերնագրով, որտեղ գրում է. «Ծաղկանոցներով շրջապատված սեղաններն իրենց զովասուն դիրքով խիստ տրամադրող էին: «Չարենցի սեղանը» երբեք չէր զբաղեցվում, գտնվում էր բակի խորքում՝ ծածկի տակ: Երեկոները հաճախ ձեռնափայտը ձեռքին մտնում էր բակ և ուղղվում դեպի իր սեղանը: Անմիջապես, կարծես մագնիսական ուժով, հայտնվում և դեպի այդ կողմն էին շարժվում ժամանակի նշանավոր մարդիկ՝ գրողներ, նկարիչներ, դերասաններ և, երբ այլևս տեղ չէր լինում սեղանի շուրջը, կողքի սեղաններն

էին միացվում ու ծայր էր առնում մի հետաքրքիր ու աշխույժ զրույց գրականության, արվեստի ու բոլորին հետաքրքրող բազում այլ հարցերի շուրջ» (**Ռ. Ղազարյան**, 1998, էջ 26-27)։

«Նալբանդ» սրճարանը

Սրճարանի մասին դերասան, ասմունքող Սուրեն Քոչարյանը հիշում է. «...որտեղ սովորաբար հավաքվում էր երևանյան բոհեման՝ Շիրվանզադեից ու Դեմիրճյանից սկսած մինչև ամենաերիտասարդները։ Չարենցը նույնպես այդ սրճարանի մշտական հաճախորդներից էր» (Հուշեր Եղիշե Չարենցի մասին, 1986, էջ 231)։ Ելնելով նման այցելուներից՝ երբեմն այն անվանում էին նաև «արվեստագետների» սրճարան (Հուշեր Եղիշե Չարենցի մասին, 1986, էջ 231)։

Այս վայրի հետ է կապված մի պատմություն Չարենց և Բակունց անբաժան ընկերների մասին (**Հ. Չարխչյան**, 2010, էջ 587-588)։ Արփենիկի մահից հետո Չարենցը վնասում է ոտքը և երկար ժամանակ անցկացնում հիվանդանոցում։ Դուրս գրվելուց հետո նրան պարբերաբար այցելում ու խնամում էր Բակունցը։ Եվ ահա մի օր, երբ Չարենցն իրեն բավական լավ էր զգում, առաջարկում է դուրս գալ՝ զբոսնելու։ Քանի որ «Նալբանդ» սրճարանը հեռու չէր գտնվում իր բնակարանից, որոշում են այնտեղ դադար առնել։ Հենց այս այցի ժամանակ Չարենցը Բակունցին առաջարկում է «Ալպիական մանուշակ»-ը նվիրել Արփենիկի հիշատակին։ Բակունցի համար, սակայն, խնդրանքն անսպասելի էր. խնդրում է Չարենցին մեկ ուրիշ ստեղծագործություն ընտրել, քանի որ այն արդեն հասցեատեր ուներ[1]։

«Ինտուրիստ» հյուրանոցում գործող սրճարանը

Ի դեպ, այս հյուրանոցում գրողն ապրել է 1928-1935 թթ., իսկ նրանում գործող սրճարանն ու ճաշարանը վերջինիս նախաճաշի, ճաշի և ընթրիքի հաճախ այցելվող վայրերից էին (**Մ. Ալազան**, 2020, էջ 169)։

Սրճարանն այցելողների շրջանում կոչվել է «Բաղդասար աղբար», որն այդ ժամանակ քաղաքաբնակների սիրված վայրերից մեկն էր։ Գուրգեն Մահարու վկայությամբ՝ «Բաղդասար աղբարը դրամատուրգ-բժիշկ Ստեփան Բաղդասարյանն էր, որն իր վրա էր վերցրել ռեստորանի սենյակներից մեկի ձևավորումն ու հոգսը, որը գործում էր որպես սրճարան» (**Վ. Կարապետյան, Մ. Հարոյան**, 2015, էջ 89), որտեղ նույնպես տեղի էին ունենում տարաբնույթ զրույցներ ու վեճեր։ Ըստ Վահրամ Ալազանի կնոջ՝

[1] Պատմվածքը գրվել էր Ժենյա Գյուզալյանի համար։ Ըստ գրականագետ Հովիկ Չարխչյանի՝ Չարենցը գիտեր նրան, նաև՝ Բակունցի համակրանքի մասին։ Սակայն Չարենցի համառության շնորհիվ ստեղծագործությունը Բակունցը նվիրում է Արփենիկին (տե՛ս նույն տեղում, էջ 587-588)։

Մարո Ալազանի հիշողությունների. «Այն ժամանակ հաճախ էին լինում գրական դիսպուտներ, որոնք շատ հետաքրքիր էին: Հետաքրքիր էին նրանով, որ այնտեղ էին բախվում հին ու նոր հայացքներն ու տեսակետները: Հետաքրքիր էին նաև այն ժամանակվա գրական բարքերը: Դիսպուտներում իրար հետ վիճում, իրար ցեխն էին թաթախում ու հանում, բայց դիսպուտներից հետո իրար հետ հավաքվում, գնում «Ինտուրիստ» սրճարան, կատակում, մի-մի բաժակ սուրճ խմում, իրար թևանցուկ արած Աբովյան փողոցում զբոսնում» (**Մ. Ալազան**, 2020, էջ 169):

Կանանց մուտքը երևանյան սրճարաններ

Հարկ է նշել այն փաստը, որ հենց Չարենցը և նրա շրջապատը բեկում մտցրին՝ կանանց մուտքը դեպի սրճարաններ: Չարենցը շատ հաճախ սրճարաններում լինում էր ոչ միայն ընկերների, գործընկերների ուղեկցությամբ, այլև Արփենիկի, իսկ հետագայում՝ Իզաբելլայի[1], նրա ընկերներից Վ. Ալազանն իր կնոջ՝ Մարոյի հետ և այլն: Հիշատակենք Մ. Ալազանի հուշերից նման այցելության մի դրվագ. «Մի օր, Մեչեթը գնալիս[2], մեր դեմ ու դեմ էր գալիս շատ գեղեցիկ մի կին: Չարենցը ծուռ վիզն ավելի ծռելով՝ նրան մի լավ վեր ու վար անելուց հետո բարձրաձայն ասաց. «Հետաքրքիր է, ու՞մն է պատկանում այդ հրեշտակը, երանի սրա տիրոջը»: Բոլորս ծիծաղեցինք, կինը նույնպես շուռ եկավ դեպի մեզ և ծիծաղեց, իսկ Արփիկը անմիջապես նրա գլուխը սեղմեց իր թևի տակ և ձեռքով մինչև ցավեցնելու աստիճան սեղմեց նրա բերանն ու գլուխը - Թո՛ղ, Արփիկ ջան, թեկուզ երկնային հրեշտակ էլ անցնի, էլ չեմ խոսի, անզուսպ եմ, անզուսպ, ինձ ների՛ր, սիրելի՛ս, ների՛ր: Ապա Արփիկը թևի տակից հանում էր նրա գլուխը, նախատում ու նախատում էր» (**Մ. Ալազան**, 2020, էջ 173):

Մտավորականների կանանց մուտքը սրճարաններ պատահական չէր, քանի որ այս նույն անձինք մինչ սրճարաններ այցելելը գրական քննարկումների մասնակցել են ավանդական դարձած իրենց հավաքատեղիներում, ինչպես, օրինակ, «Պանդոկ» անունը կրող գրական ընկերակցության ակումբում (**Հ. Չարխչյան**, 2021, էջ 15), որտեղ այդ ժամանակ հիմնականում հավաքվում էին երիտասարդ ստեղծագործողները: Վերո-

---

[1] «Ըստ հուշագրության՝ մինչև 1936 թ. Վահրամ Ալազանի ձերբակալությունը Մարո Մուրադյանը (Ալազան) նրա հետ ապրել է երջանիկ և լեցուն կյանք՝ միշտ ամուսնով հիացած, նոր ձևավորվող բոլշևիկյան սոցիալիստական արժեքների համատեղ ընկալումներով և խորհրդային մտավորականության ու վարչարարների հետ ամենասերտ հարաբերություններով: Ամուսնանալուց հետո համարյա ամենօրյա շփումներ է ունեցել գրողների հետ, ներկա է եղել նրանց քննարկումներին, վեճերին, մասնակցել ընտանիքների փոխադարձ այցելություններին, նրանց սրճարանային առօրյային, խնջույքներին, զբոսանքներին և իր տանն էլ բազմիցս հյուրընկալել նրանցից շատերին» (տե՛ս **նույն տեղում**, էջ 9-10):

[2] Նկատի է ունեցել Կապույտ Մզկիթի բակում գործող «Արևելյան սրճարանը», ուր սիրում էր հաճախել Չարենցը («Երևանի բանվոր», 04. VI. 1934):

նշյալ կանանցից բացի՝ այստեղ հաճախում էին նաև բանաստեղծուհի, գրաքննադատ Արմենուհի Տիգրանյանը և այլ կին ստեղծագործողներ ու գրականասերներ։

Ստալինյան բռնաճնշումների ազդեցությունը երևանյան սրճարանների վրա

1930-ական թվականներին սրճարանային պատկերը սկսում է փոխվել՝ պայմանավորված մտավորականների ձերբակալություններով, աքսորներով ու գնդակահարությամբ։

Ուսումնասիրելով Արևելյան Հայաստանում սուրճի և սրճարանների վաղ պատմությունները՝ ոչ մի հիշատակության չենք հանդիպում, որ տարբեր երկրների նման, ինչպես, օրինակ, Օսմանյան կայսրությունում, Պրուսիայում, Շվեդիայում, Իտալիայում, դեռևս XVII-XVIII դդ. սուրճ խմելն ու սրճարանները՝ որպես ընդդիմադիր մտքերի և հեղափոխական գաղափարների ձևավորման վայրեր, արգելված են եղել (**Ա. Դաւրիժեցի,** 1990, էջ 433)։ Սակայն նկատում ենք, որ Հայաստանում 1937-1959 թթ. «անորոշ լռություն է թաքնված» սրճարանների առօրյայում։ Մտավորականների նկատմամբ Ստալինյան բռնաճնշումների հետևանքով փակվում են նաև սրճարանները, քանի որ հանրային տարածքում մեկ սեղանի շուրջ հավաքվածների մտքերն ու գաղափարները, ենթադրաբար, կարող էին վտանգ ներկայացնել պետությանը։ Դեպքերի նման զարգացումներից հասկանալի է դառնում սրճարանների՝ ստվերում հայտնվելու փաստը մինչև Ստալինի մահը՝ 1953 թ.։

Եվ ահա 1930-ականների մտավորականների սիրելի «Տուրիստ» սրճարանը դառնում է Խորհրդային Հայաստանի ՊԱԿ-ի աշխատակիցների հիմնական թիրախը, որտեղից աղավաղված տեղեկություններ հավաքելով՝ իրենց հարմար տարբերակով ներկայացնում էին Չարենցի, Մահարու, Բակունից, Թոթովենցի, Ալազանի և այլոց հարցաքննությունների ժամանակ։ Նրանց համար կարևոր էր կորզել այն տեղեկությունը, որ հիշյալ մտավորականները սրճարանում իրականացրել են նացիոնալիստական, հակահեղափոխական թեմաներով զրույցներ։ Գրականագետ Դավիթ Գասպարյանը գրում է, որ այս մեղադրանքներն առավելապես կենտրոնացրել են Չարենցի ուղղությամբ[1]։

---

[1] Գրականագետը «Փակ դռների գաղտնիքը» գիրքը կազմելիս ուսումնասիրել է նշված մտավորականների և շատ ուրիշների հարցաքննությունները, ինչից եզրակացնում է՝ Չարենցին ուղղված հարցերում մշտապես գերակշռել է այն մեղադրանքը, որ վերջինս 1933 թ. Երևանում հարել է հակահեղափոխական, տրոցկիստական, նացիոնալիստական տեռորիստական կազմակերպության։ Եղել է այդ կազմակերպության ղեկավար անդամներից մեկը, տարածել հակահեղափոխական նացիոնալիստական պրոպագանդա՝ ուղղված խորհրդային իշխանության դեմ (**Դ. Գասպարյան**, Փակ դռների գաղտնիքը, Երևան, 1994, էջ 26)։

Գրող, գրականագետ Նորայր Ադալյանը գրում է. «Դահիճների մտահղացմամբ՝ Երևանի կենտրոնում գտնվող «Տուրիստ» սրճարանը դարձավ այդ ողբերգության բեմադրության հիմնական վայրը, որտեղ զոհերը հավաքվել են ոչ թե մեկ գավաթ սուրճի շուրջ մտքեր փոխանակելու գրականության ու կյանքի վերաբերյալ, կատակելու, միմյանց փոխանցելու իրենց մտքերն ու զգացմունքները, այլ «գաղտնորեն» որոշելու այն ճանապարհներն ու միջոցները՝ տեռոր, զինված ապստամբություն, որոնք պիտի հասցնեին առկա խորհրդային կարգերի տապալմանը» (Ն. Ադալյան, 1994, էջ 126-127)։

Իսկ կինոռեժիսոր Արա Վահունին նշում է. «Ժամանակին Երևանում սրճարաններ շատ են եղել, ուր հավաքվել են Չարենցը, Շիրվանզադեն, Թերլեմեզյանը, Մահարին... Այս բոլոր սրճարանները փակվեցին, որովհետև մարդիկ կարող էին այդտեղ իրար հետ խոսել, իսկ խոսելն այդ ժամանակ առանձնապես չէր խրախուսվում, մանավանդ, եթե երեք հոգուց ավելի մարդ էր հավաքվում մի սեղանի շուրջ» (Մաեստրո Քոչարը։ Հուշերի անդրադարձում, 2016, էջ 284)։

Ստալինյան բռնաճնշումներն ավարտվեցին նրա մահից հետո. բռնատիրական կարգերին փոխարինելու եկան համեմատաբար մեղմ ժամանակներ ու բարքեր։ 1960-ական թվականներին կառուցվեց հանրաճանաչ «Արագիլ» սրճարանը, որը, ըստ կինոռեժիսորի, դառնում է երևանյան սրճարանների «առաջին արագիլը»։

Սուրճի մասին հիշատակությունները Չարենցի տուն-թանգարանում և «Երկիր Նաիրի» վեպում

Հարկ է նշել, որ Չարենցը սիրում էր սուրճ վայելել նաև տանը, պատրաստել իր ձեռքով ու հյուրասիրել։ Ուներ պատրաստման նախընտրելի իր տարբերակը։ Գրողը նախընտրել է խմել դառը, թունդ սուրճ։ Ըստ գրողի թոռնուհու՝ Գոհար Չարենցի բանավոր վկայության՝ խմում էր սառույցով լի ջրով, երբեմն՝ նաև կոնյակով[1]։

Նկ. 1 Բաժակը պատկանել է գրողին, պահվում է Ե. Չարենցի տուն-թանգարանում, ճենապակի, 4,5սմx2,5սմ, ՀՖ ԱԻ 7734։

Այն մասին, որ բազմիցս շեշտվում է Չարենցի հետաքրքրությունն ու սերը դեպի Չինաստանի և Ճապոնիայի մշակույթը, նաև արտացոլված է սուրճ-ըմպելիքի նրա սպասքում։ Դիտողի աչքից չեն վրիպում սպասքի վրա առկա զարդանախշերը։

[1] Այս հարցում մեր ուսումնասիրությանը մեծապես աջակցեցին գրողի տուն-թանգարանում պահվող սուրճի զանազան սպասքի տարբեր պարագաներն ու Գոհար Չարենցի հուշերը։

Կարծում ենք՝ սուրճի նկատմամբ սերը հավանաբար պայմանավորված է նաև նրա ծննդավայր Կարսով: Նշենք, որ սուրճի մշակույթին Կարսում ծանոթ են եղել դեռևս XVIII դարից, և ապա այդտեղից այն տարածվել է նաև Ալեքսանդրապոլում:

Չարենցի՝ Կարսի իրերից պահպանվել է նաև 1900-ական թվականների մի սրճաղաց, որն այժմ գտնվում է տուն-թանգարանում:

Կարսի ու սուրճի մասին խոսելիս անհրաժեշտ է անդրադառնալ Ե. Չարենցի «Երկիր Նաիրի» ստեղծագործությանը, որի սյուժեի զարգացման մեջ ուրույն տեղ ունեն երկու նաիր-ցիների կերպարներ՝ Ղահվեճի Սեթոն և Տելեֆոն Սեթոն. «Հարևան խանութը - մեզ արդեն բավականին ծանոթ Ղահվեճի Սեթոյի խանութն է, ուր նա չոր սուրճ է ծախում: Ինչպես այս խանութը, այնպես էլ իրեն՝ ղահվեճի Սեթոյին չպետք է շփոթել Տելեֆոն Սեթոյի և նրա այն հայտնի սրճարանի հետ, որը գտնվում է մի քանի խանութ այն կողմը, և որի ցուցանակի վրա, ինչպես ասված է արդեն, գրված է՝ «Չայ, Ղահվե, Ճաշարան, Սեթրակ Ֆալիան»: Չնայած որ երկուսի անունն էլ Սեթո է և երկուսն էլ գործ ունեն սուրճի հետ, սակայն մեկը չոր սուրճ ծախող է, իսկ մյուսը - սրճարանատեր» (**Ե. Չարենց**, ԵԺ 4, Եր., 1987, էջ 41:)[1]:

Նկ. 2 Սեթրակ Ֆալիան, Հովհաննես Շավարշ, թուղթ, խառը տեխնիկա, 59x41,5,
Ե. Չարենցի տուն-թանգարան, ՀՖ, Կ 7897:

Գրականության ցանկ

1. *Ադալյան Ն.,* Թոթովենց, Ե., 1994:
2. *Ալազան Մ.,* Իմ կյանքի ողբերգությունը. Հուշեր, Երևան, Հ., 2020:
3. *Գասպարյան Դ.*, Փակ դռերի գաղտնիքը (Չարենցը, Բակունցը և մյուսները), Ե., 1994:
4. *Գասպարյան Դ.,* Եղիշե Չարենցի կյանքը և ժամանակը, Ե., 2022:
5. *Դաւրիժեցի Ա.,* Գիրք պատմութեանց (աշխատ.՝ Լ. Ա. Խանլարյանի), Ե., 1990:
6. «Երևանի բանվոր», 04. VI. 1934:
7. *Կարապետյան Վ.,* Հարոյան Մ., Grand Hotel Yerevan, Ե., 2015:
8. Հուշեր Եղիշե Չարենցի մասին, խմբ.՝ Ալ. Զաքարյան, Ե., 1986:
9. *Ղազարյան Ռ.,* Չարենցի նշխարներ, Երևան, «Նաիրի» հրատ., 1998, 48 էջ:
10. *Մաեստրո Քոչարը*: Հուշերի անդրադարձում (կազմողներ՝ Ա. Հովհաննիսյան, Լ. Մարտիրոսյան-Քոչար), Ե., 2016:

[1] Վեպի նկարազարդումները, որոնք պահվում են բանաստեղծի տուն-թանգարանում, արել է նկարիչ Հովհաննես Շավարշը: Նման նկարազարդումների շարք ունի նաև Մարտիրոս Սարյանը:

11. *Չարխչյան Հ.,* Չարենցի կրակոցը, Ե., 2019։
12. *Չարխչյան Հ.,* Չարենց և Արմենուհի, Երևան, «Անտարես» հրատ., 2021։
13. *Չարենց Ե.,* Երկերի ժողովածու 4, Երկիր Նաիրի, Ե., 1987։
14. *Ստեփանյան Գ.,* Սրճարանային միջավայրը Երևանում. արևելյան տարածք արև-մըտյան հետագծով.- Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ 1, Հայ ժողովրդի մշակույթը XVII, Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, Երևան, ՀԱԻ հրատ, 2018, էջ 340-352։

References

1. **Adalyan N.,** Totovents, Yerevan, 1994.
2. **Alazan M.,** Im kyank'i voghbergutyuny. Husher, Yerevan, 2020.
3. **Charkhchyan H.,** Charentsi krakotsy, Yerevan, 2019.
4. **Charkhchyan H.,** Charents yev Armenuhi, Yerevan, 2021.
5. **Charents Ye**., Yerkeri zhoghovatsu 4, Yerkir, 1987.
6. **Davrizhetsi A**., Girk patmuteants (ashkhat., L. A. Khanlarean) , Yerevan, 1990.
7. **Gasparyan D.,** Pak drneri gaghtniky (Charentsy, Bakuntsy ev myusnery) , Yerevan., 1994.
8. **Gasparyan D**., Yeghishe Charentsi kyanky yev zhamanaky/, Yerevan, 2022.
9. **Ghazaryan R.,** Charentsi nshkharner, Yerevan, 1998.
10. Husher Yeghishe Charentsi masin, khmb., Al. Zak'aryan , Yerevan, 1986.
11. **Karapetyan V., Haroyan M.,** Grand Hotel Yerevan, Yerevan, 2015.
12. **Mayestro Kochary.** Husheri andradardzum (kazmoghner, A. Hovhannisyan, L. Martirosyan-Kochar) Yerevan, 2016.
13. **Stepanyan G.,** Srcharanayin mijavayry Yerevanum; arevelyan taratsk arevmtyan hetagtsov, Hnagitutyan ev azgagrutyan instituti ashkhatutyunner 1, Hay zhoghovrdi mshakuyty XVII, Avandakany yev ardiakany hayots mshakuytum, Yerevan, HAI hrat, 2018, p. 340-352.
14. "Yerevani banvor"˙04. VI. 1934.

Տաթևիկ Սարոյան- *թանգարանագետ, Մաշտոցյան Մատենադարանի հայցորդ, ուսումնասիրության թեման է՝ «Սուրճը և առօրեականության պատմությունը հայ իրա-կանության մեջ»: Մատենադարանի հանրային կապերի բաժնի վարիչ, Բրիտանական թանգարանի Միջազգային ծրագրերի շրջանավարտ: Գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ թանգարաններ՝ ցուցահանդեսների, կրթական ծրագրերի կազմակերպում, այցելուների հետազոտություն, առօրեականության պատմություն:*

Հեղինակ է 4 գիտական հոդվածի:

ORCID ID: 0009-0002-2904-9222

saroyantatev@gmail.com

Татевик Сароян – музеолог, аспирант Матенадарана имени Месроп Маштоца, тема исследования "Кофе и история повседневности в армянской действительности". Руководитель отдела по Связям с общественностью Матенадарана, выпускник Международных программ Британского музея. Сфера научных интересов: музеи: организация выставок, образовательные программы, исследование посетителей, история повседневности.

Автор 4 научных статей.

ORCID ID: 0009-0002-2904-9222

saroyantatev@gmail.com

Tatevik Saroyan - museologist, PHD student of Mashtots Matenadaran, the topic of the study is "Coffee and the history of everyday life in Armenian reality". Head of the Public Relations Department of Matenadaran, the British Museum ITP Fellow. Interests: museums: organization of exhibitions, educational programs, visitor research, history of everyday life.

Author of 4 scientific articles.

ORCID ID: 0009-0002-2904-9222

saroyantatev@gmail.com

Ընդունվել է տպագրության 7.11.2023թ.: